Համաձայնագիր

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածք մուտք գործող երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի մասին

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների կառավարությունները այսուհետ անվանվող Կողմեր

հաշվի առնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների տարածաշրջաններում հանցագործությունների, ահաբեկչությունների, այլ մարտահրավերների և սպառնալիքների դեմ համատեղ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը

գիտակցելով, որ Անկախ Պետությունների Համագործակցության երկրների տարածք մուտք գործող երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի ստեղծումը պատասխանում է իրենց երկրների անվտանգության ապահովման հետաքրքրություններին;

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության նպատակներից և խնդիրներից՝

համաձայնության եկան հետևյալում.

Հոդված 1

Կողմերը ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածք մուտք գործող երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգ, սույն Համաձայնագրի հավելվածում ներառված, Տեխնիկական պահանջարկներում շարադրված պայմաններին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը հաստատում են.

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից - պետությունների տարածք մուտք գործող երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի Տեխնիկական պահանջարկները (կցվում է);

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից – պետությունների տարածք մուտք գործող երրորդ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի Տեխնիկական առաջադրանքները (կցվում է);

Հաշվառման տվյալների միասնական ցուցակը (կցվում է);

Հոդված 3

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից - երկրների տարածք մուտք երրորդ երկրների քաղաքացիների և առանց քաղաքացիության անձանց հաշվառման Միասնական համակարգի շրջանակներում Կողմերը ստեղծում են հաշվառման տվյալների բանկ՝ հիմնված տվյալների ազգային բազաների բաշխման կառույցի վրա:

Հոդված 4

Պատվիրատուն /Դաշնային միգրացիոն ծառայություն /Ռուսաստանի ԴՄԾ/ կազմակերպում է տենդերների /մրցույթների, աճուրդների/ անցկացում՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածք մուտք գործող երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի ստեղծման համար՝ սույն Համաձայնագիրը ստորագրած Կողմերի ներկայացուցիչների՝ որպես փորձագետների ներգրավմամբ:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի ստորագրման պահից Կողմերը երեքամսյա ժամանակահատվածում տեղեկացնում են դեպոզիտարիին իրենց լիազորված մարմինների մասին, որոնք պատասխանատու են սույն Համաձայնագրի կատարման համար:

Հոդված 6

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածք մուտք գործող երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման Միասնական համակարգի ռեսուրսների լրացման, օգտագործման կարգը, տեղեկատվության հետ վարվելու կանոնները, ինչպես նաև տվյալ համակարգի համատեղ աշխատանքների մշակման, ստեղծման և զարգացման ուղղությամբ ֆինանսավորման կարգը կորոշվեն առանձին փաստաթղթերով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ժամանակավոր կիրառվում է ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում, երբ դեպոզիտարին ստանում է՝ այն ստորագրած Կողմերի կողմից՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացման մասին 3-րդ ծանուցման 30 օրը լրանալուց հետո:

Այն Կողմերի համար, որոնք կատարել են ներպետական ընթացակարգերը ավելի ուշ, սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 30 օրը լրանալուց հետո՝ դեպոզիտարիի կողմից համապատասխան փաստաթղթեր ստանալու պահից:

Հոդված 8

Ըստ Կողմերի փոխադարձ համաձայնության սույն Համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք նրա անկապտելի մասն են կազմում, և ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ժամանակ Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը, լուծվում են հետաքրքրվող Կողմերի խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով վիճելի հարցերի կարգավորման անհնարինության դեպքում Կողմերը ըստ համաձայնության դիմում են Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական Դատարան կամ դիմում են մեկ ուրիշ գործողության:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո բաց է՝ Անկախ Պետությունների Համագործակցության այլ մասնակից-երկրներ միանալու համար, որոնք կիսում են իր դրույթները և պատրաստ են վերցնելու իրենց վրա սույն Համաձայնագրից բխող պարտականությունները: Միացող պետության համար սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դեպոզիտարի կողմից միանալու մասին փաստաթղթի ստացման օրվանից 30 օրը անցնելուց հետո::

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրն կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ ուղարկելով գրավոր տեղեկացում դեպոզիտարիին՝ իր որոշման մասին, ոչ ուշ, քան դուրս գալու ամսաթվից 6 ամսից առաջ և կարգավորելով ֆինանսական և այլ պատրականությունները՝ առաջ եկած սույն Համաձայնագրի գործելու ընթացքում:

Կնքվել է քաղաքում թվին ռուսերեն լեզվով, բնագիր օրինակով: Բնագիր օրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը կուղարկի վավերացված պատճեն, սույն Համաձայնագիրը ստորագրած, յուրաքանչյուր պետությանը:

Ադրբեջանի Հանրապետության Կառավարություն

Հայաստանի Հանրապետության Կառավարություն

Բելոռուսի Հանրապետության Կառավարություն

Ղազախստանի Հանրապետության Կառավարություն

Ղրղզստանի Հանրապետության Կառավարություն

Մոլդովայի Հանրապետության Կառավարություն

Ռուսաստանի Դաշնային Կառավարություն

Տաջիկիստանի Հանրապետության Կառավարություն

Թուրքմենիստանի Կառավարություն

Ուզբեկիստանի Հանրապետության Կառավարություն

Ուկրաինայի Կառավարություն

ՏԵՂԵԿԱՆՔ

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներ մուտք գործող երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման միասնական համակարգի մասին» համաձայնագիրը նպատակահարմար է կնքել ելնելով ԱՊՀ մասնակից պետությունների անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում հանցավորության, ահաբեկչության, այլ մարտահրավերների և սպառնալիքների դեմ համատեղ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն